



Հ Ր Ա Ս Ա Ն  
П Р И К А Յ

«ՕՁ» Տեղ. Երև. 20/5թ.

№ Դ-255-ԼԵ

**Կարգապահական տույժեր կիրառելու մասին**

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») անվտանգության և վերահսկողության տնօրինության կողմից Ընկերության «Արգնի» ՇԷՑ-ում բացահայտված՝ էլեկտրական էներգիայի քանակի հաշվառման ոլորտում խախտումների համար, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն,

նկատի ունենալով հայտնաբերված փաստերով իրականացված կարգապահական վարույթի արդյունքները,

հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, 226-րդ հոդվածը և 113 հոդվածի 1-ին մասի 6 կետը

**ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ**

1. Լուծել աշխատանքային պայմանագրերը Ընկերության «Գեղամա» մ/ճ «Արգնի» ՇԷՑ-ի հետևյալ աշխատողների հետ՝
  - 1.1. «Բյուրեղավան» տեղամասի պետ Ռոմիկ Գուրգենի Սկրտչյան (արձակուրդից վերադառնալուց հետո),
  - 1.2. «Բյուրեղավան» տեղամասի էլ. մոնտյոր-տեսուչ՝ Գագիկ Դմիտրիի Խեչոյան
  - 1.3. «Նոր Գեղի» տեղամասի պետ՝ Միքայել Վարուժանի Հայրապետյան
  - 1.4. «Նոր Գեղի» էլ. մոնտյոր-տեսուչ՝ Մերուժան Կնյազի Պետրոսյան:
2. Ընկերության «Գեղամա» մ/ճ «Արգնի» ՇԷՑ-ի պետ Հ.Ավագյանին՝ հաշվի առնելով նախկինում ստացված խիստ նկատողությունը՝ ուժեղացնել հսկողությունը ենթակա անձնակազմի նկատմամբ՝ Ընկերության էլեկտրական էներգիայի քանակի հաշվառման ոլորտում որևէ խախտումներ բացառելու համար:
3. Ընկերության բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝ հաշվի առնելով հսկողության ոչ պատշաճ մակարդակը՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ Ընկերության էլեկտրական էներգիայի քանակի հաշվառման ոլորտում որևէ խախտումներ բացառելու համար:
4. Ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ, իրացման տնօրեն Ա.Թոխունցին և Ընկերության անվտանգության և վերահսկողության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վ.Բունազյանին՝ հաշվարկել Ընկերությանը պատճառված վնասի չափը և միջոցներ ձեռնարկել այն վերականգնելու ուղղությամբ:

5. Ընկերության անձնակազմի կառավարման բաժնի պետ Հ.Ջեյնալյանին՝ ապահովել սույն հրամանի պատշաճ հրապարակումը (ներառյալ՝ 1-ին կետում նշված անձանց՝ դրան ստորագրությամբ ծանոթացնելը):
6. Սույն հրամանի վերահսկողությունը թողնել Ընկերության գլխավոր տնօրենին:

Կ.Ս. Հարությունյան  
Գլխավոր տնօրեն

